<<Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն>> ՓԲԸ
ք. Երևան Ֆանարջյան փ. 76 շ.

27 հունիսի 2017 թ.
ժամը 12:00 թիվ՝ 2

Արձանագրություն
*«ՈՒԱԿ-ԲԺԱՊ-ԲՄԱՊՁԲ-17/3» ծածկագրով գնման ընթացակարգի*
*գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի*
Հանձնաժողովի նիստին մասնակցում էին՝

**Գնահատող հանձնաժողովի նախագահ.**
*/գն. տեղ. բուժ. գծ./ԳՊ/ԳԱՊ Վ. Շահսուվարյան*
**հանձնաժողովի անդամներ -**
*/օնկոգին. թիվ 1 բաժ. վարիչ/ ԳՊ/ԳԱ Գ. Ջիլավյան*
*/որովայն. և էնդովիր. բաժ. վարիչ/ ԳՊ/ԳԱ Ա. Նիկողայան*
*/ինժեներական. խմբ. ղեկ./ ԳՊ/ԲԱ Պ. Նադիրյան*
*/գլխ. հաշվապահ/ ԳՊ/ԲԱ Շ. Անանյան*
**Հանձնաժողովի քարտուղար՝**
ԳՊ/Միմ Հարություն Օհանյան

*ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի /այսուհետև՝ Կարգ/ 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված*

## 1. Հայտերի բացման մասին

*Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Շահսուվարյան*

1. Ընդունել ի գիտություն որ՝

1.1 Գնման ընթացակարգի հրավերը, 12 հունիսի 2017 թ. հրապարակվել է www.armeps.am համակարգում և սահմանված կարգով տրամադրվել է տեղեկագրում հրապարակելու նպատակով:

1.2 Հայտեր ներկայացրել են հետևյալ մասնակիցները՝

Դիասերվ ՍՊԸ Հարկային կոդ 00029275, Հասցե Կորյունի 7/1 34, Էլեկտրոնային փոստ diserv@arminco.com, Հեռախոսահամար 010587660

Ինտերմեդ Գրուպ ՍՊԸ Հարկային կոդ 02621803, Հասցե Ռուբինյանց 27/55, Էլեկտրոնային փոստ intermedgroupllc@gmail.com, Հեռախոսահամար +37410203525

**2. Հայտ ներկայացրած մասնակիցների հայտերում ներառված փաստաթղթերի համապատասխանության մասին**

2.1 Մասնակիցների ներկայացրած էլեկտրոնային հայտերը www.armeps.am համակարգի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի.

Հայտ ներկայացրած մասնակիցներ՝

Ինտերմեդ Գրուպ ՍՊԸ-ն հայտում ներառված փաստաթղթերը կազմել և ներկայացրել է հրավերի պահանջներին համապատասխան.

Դիասերվ ՍՊԸ-ն հայտը կազմել և ներկայացրել է հրավերի պահանջներին անհամապատասխան. մասնավորապես՝

- հայտի ապահովման նպատակով ներկայացված տուժանքի համաձայնագիրը և դրան կից վճարման պահանջագիրը Մասնակիցը ներկայացրել է առանց թվային ստորագրության, հայտերում ներառված փաստաթղթերի վրա դրված թվային ստորագրությունները տեսանելի չեն. վճարման պահանջագրում լրացված չէ հայտի ապահովման գումարի արժույթի կոդը և լարացված է վճարման պահանջագրի ներկայացման օրը:

Հրավերի 8.19 կետի համաձայն՝

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ,

տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա:

Հրավերին կից վճարման պահանջագրի լրացման կարգի համաձայն՝ ներկայացման ամսաթիվը լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը իսկ հայտի ապահովման գումարի արժույթի կոդը լրացվում է վճարողի կողմից նախապես (Հայաստանի Հանրապետության դրամի կոդը համաձայն ԻՍՕ 4217 ստանդարտի՝ AMD):

Ընդունել որոշում՝ կողմ ***5 (հինգ)***, դեմ ***0 (զրո)***

3. Հայտերի վերաբերյալ հարցումների և ներկայացրած պարզաբանումների մասին՝

3.1 Հարցումներ և պարզաբանումներ չեն եղել.

4. Ներկայացրած բողոքների և դրանց վերաբերյալ կայացրած որոշումների մասին՝

4.1 Բողոքներ չեն եղել:

5. Հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագրի մասին՝

5.1 Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել

6. *Մասնակիցների ներկայացրած գների մասին (ՀՀ դրամ)*

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Մասնակցի անվանումը և գնի առաջարկը ՀՀ դրամ, առանց ԱԱՀ | |
|---|---|---|---|
| | | Դիասերվ ՍՊԸ | Ինտերմեդ Գրուպ ՍՊԸ |
| 1 | Արգանդի մանիպուլյատոր | 3700000 | ------------------ |
| 2 | Ուլտրաձայնային դանակի աքսեսուրների հավաքածու | ------------------ | 10000000 |

7. *Մերժված հայտերի մասին*

7.1 Քանի որ Դիասերվ ՍՊԸ-ի ներկայացրած հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին, գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Հրավերի 1-ին մասի 8.2 կետի պահանջներով որոշեց՝ Դիասերվ ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժել:.

Ընդունել որոշում՝ կողմ **5 (հինգ)**, դեմ **0 (զրո)** ձայներով

8. Գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մսնակիցների մասին

8.1 Գնահատող հանձնաժողովի կողմից քննարկվեց գնման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան հայտեր ներկայացրած Մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները և հանձնաժողովը նախապատվությունը տալով նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակիցներին.

Ընդունել որոշում՝ կողմ **5 (հինգ)**, դեմ **0 (զրո)** ձայներով

***2-րդ չափաբաժնի մասով գնման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակից Ինտերմեդ Գրուպ ՍՊԸ -ին***

9. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին

9.1 Գնման ընթացակարգի հրավերով սահմանված Մասնակիցների որակավորման չափանիշների գնահատման արդյունքների հրապարակման նպատակով հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել Կարգի 46-րդ կետով սահմանված ժամկետներում: Գնահատող հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել՝

- Կարգի 43-րդ կետի դրույթներին համապատասխան կատարել հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների և գնման ընթացակարգի հրավերով սահմանված <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերվող որակավորման պահանջի առկայության վերաբերյալ
- Ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել գնման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը):

որոշեց կողմ **5 (հինգ)**, դեմ **0 (զրո)** ձայներով

**Գնահատող հանձնաժողովի նախագահ**
*/փն. փեղ. բուժ. գծ./ԳՊ/ԳԱՊ Վ. Շահսուվարյան*

**հանձնաժողովի անդամներ -**
*/գլխ. հաշվապահ/ ԳՊ/ԳԱ Շ. Անանյան*

*/ինժեներական. խմբ. ղեկ./ ԳՊ/ԳԱ Պ. Նադիրյան*

*/օնկոգին. թիվ 1 բաժ. վարիչ/ ԳՊ/ԲԱ Գ. Ջիլավյան*

*/որովայն. և էնդովիր. բաժ. վարիչ/ ԳՊ/ԲԱ Ա. Նիկողոսյան*

**Հանձնաժողովի քարտուղար՝** ԳՊ/Միմ Հ. Օհանյան